Ալեքսանդր Շիրվանզադե

Ժողովացավ

Սրտի ցավով հաղորդում եմ «Տարազի» գավառական ընթերցողներին, որ գարունը սկսելուն պես Թիֆլիսում երևացել է մի նոր էպիդեմիա: Ախտը սոսկալի է և օրից-օր ավելի ու ավելի է տարածվում: Մինչև այժմ դեռ նրա սկզբնական պատճառները քննված չեն, բայց ցավը սկսվում է այսպես: Դիցուք Գալավինսկի պրոսպեկտի վրա պատահում են երկու ծանոթներ մեկը վարակված, մյուսը առողջ: Առաջինը արտասանում է «ժողով», երկրորդը իսկույն կրկնում է «ժողով»: Մեկ էլ տեսար երկուսի էլ աչքերը կարմրեցին, գլուխները պտտեցին, բերանները փրփրեցին: Երկուսը միասին սկսումեն վազվզել դեսուդեն, կրկնելով «ժողով, ժողով» և կես ժամվա մեջ վարակում են մի խումբ մարդկանց: Ախտը ավելի հեշտությամբ կպչում Է անգործներին:

Գլուխս կորցրել եմ, չգիտեմ ի՞նչ անեմ: Անցյալ օրը մի հատ պուլվերիզատոր գնեցի, որ ամեն առավոտ քնից զարթնելիս սենյակս դեզինֆեկցիա անեմ այդ «ժողով» ասած ախտի բացիլներից ազատվելու համար: Բայց չեղավ: Երեկ երեկոյան ինձ մոտ եկավ բարեկամներիցս մեկը, որը մի խմբագիր աշխատակից է: Նա հագած էր Մոլիերի Պանկրատ փիլիսոփայի պես, մի լայն, երեք հարկանի վերակու: Նայեցի բարեկամիս և տեսա, որ նրա բանը բուրդ է: Սկզբում կարծեցի, որ փորացավ ունի: Բայց երբ հարցրի առողջության մասին, նա, տրագիկ-դերասանի դիրք ընդունելով, աղաղակեց. «Ժողով»:

Փահ, խեղճ ողորմելի, դո՞ւ էլ վարակվեցիր, գոչեց պուլվերիզատորը նրա ճակատին ուղղելով, դո՛ւրս, դո՛ւրս:

Եվ հայտնվեց, որ բարեկամս վարակվել է իր խմբագրից, իսկ այդ խմբագիրն էլ վարակվել է մի ուրիշ խմբագրից: Այժմ մամուլի բոլոր ներկայացուցիչները վարակված են «ժողովով»: Գլխավոր բացիլ տարածողներն են «Արձագանքի» խմբագիր Աբգար Հովհաննիսյանը և «Нов Обоз.» լրագրի աշխատակից Նիկոլայ Նիկոլաձեն, որոնք անցյալ տարի եռանդով կռվում էին խոլերայի դեմ:

Կատակը մի կողմ, ամբողջ Թիֆլիսը այսօր «ժողովներ», «մասնաժողովներ» և «հանձնաժողովներ» կազմելու փորացավ է ընկել: Ամենքը խելագարվում են ժողովելու համար կամ ժողովվում են խելագարվելու համար: Չգիտեմ այս բոլորի վերջն ինչ կլինի: